№ 123 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 9 1901 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 9 № 123

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համոզեցէք փորձով եւ օրինակով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռուսաց թատրոն. Ցուցահանդէս Րիգայում. Նամակ Բալախանիից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալիայում.

ՀԱՄՈԶԵՑԷՔ ՓՈՐՁՈՎ ԵՒ ՕՐԻՆԱԿՈՎ

Վերջին տարիների ընթացքում Անդրկովկասի գիւղերում սկսել են տարածվել որոշ քանակութեամբ գիւղատնտեսական գործիքներ՝ գութաններ, գերանդիներ, մանգաղներ, ցաքաններ և ուրիշ պարագաներ։ Առաջ կատարելագործված գործիքները կազմում էին հազուադէպ բացառութիւններ, իսկ այժմ նրանք ցրված են մեր երկրի զանազան մասերում։ Այդ գործիքների տարածման օգնեցին մի կողմից գերմանական կոլոնիաները, որոնք պատրաստում էին գութաններ իրանց սեփական արհեստանոցներում, միւս կողմից այն ցուցահանդէսները, որոնք իրագործվել էին կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ջանքերով, երրորդ կողմից այն մասնաւոր անձինք, որոնք ձեռք էին բերել մեքենաներ իրանց համար գործածելու կամ ուրիշների վրա ծախելու նպատակով։

Այժմ մեր երկրում գոյութիւն ունեն գործիքների խանութներ և պահեստներ, որոնք կանոնաւոր առևտուր են անում և տարուց տարի ընդարձակում են իրանց գործունէութիւնը։ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը ունի կենտրոնական պահեստ Թիֆլիսում և մի քանի բաժանմունքներ Կախեթի շրջանում։

Մի տասը տարի առաջ Ռուսաստանում հազիւ կարելի էր հաշուել 50 պահեստ երկրագործական գործիքների համար, իսկ այժմ այդ թիւը աւելի քան հինգ անգամ մեծացել է։ Այդպիսի պահեստներ կան երեք հարիւր գաւառներում և տարեկան ունեն աւելի քան երկու միլիոն րուբլու շրջանառութիւն։

Գործիքների տարածման հետ միասին զուգընթաց առաջ է գնում և տեղական արհեստանոցների բացումը։ Ներկայումս Գանձակի գաւառի մի քանի գիւղերում կան արհեստանոցներ, որտեղ կարկատում են, նորոգում փչացած գործիքները։ Տեղական վարպետները փորձում են շինել այնպիսի գութաններ, որոնք յարմարեցրած են տեղական պայմաններին։ Ամբողջ Ռուսաստանում այդպիսի արհեստանոցների թիւը հասնում է ներկայումս 1100-ի։

Փորձը, դիտողութիւնները ցոյց են տալիս, որ գիւղական ժողովուրդը, երբ համոզվում է, որ մի որ և է գործիք օգտաւէտ է և ձեռնտու և երբ տեսնում է, որ կարող է նրան կարկատել և նորոգել իր շրջակայքում, այն ժամանակ նա այլ ևս չէ խորշում նորութիւններից և մտցնում է իր կեանքի գործադրութեան մէջ։ Համոզեցէք գիւղացուն փորձերով և օրինակով, որ ձեր առաջարկած կատարելագործութիւնը շահաւէտ է նրա համար և դուք կը տեսնէք, որ նա կընդունի ձեր նպատակայարմար առաջարկութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՑ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, յունիսի 7-ին, Պրավդինի խումբը ներկայացրեց արքունական թատրոնում Նեմիրովիչ-Դանչենկօի «Ոսկի» (Золото) կոմեդիան չորս գործողութեամբ։

Պիեսի մէջ շօշափված է մի հին, բայց եւ միշտ թարմ կենսական հարց՝ որբերի եւ նրանց գոյքի խնամակալութեան մասին։ Վալենտինա Կօչեմիրկօվա մնացել է ծնողների մահից յետոյ որբ աղջիկ։ Նրան վերցրել է խնամելու նրա հօրաքոյրը, որը մեծ հաճութեամբ է յանձն առել այդ գործը, որովհետեւ այդպիսով նա իր ձեռքն է գցել որբի մեծ կարողութիւնը։ Հօրաքոյրը անխնայ մսխում է որբի գումարները, եւ որպէս զի վարչական անձինք ուշք չը դարձնեն այդ վատնումների վրա, նա որբի կողմից եւ անունից անում է նուիրատուութիւններ այս եւ այն բարեգործական հաստատութեան։ Որբը, լինելով բարեսիրտ եւ ազնիւ մի անձնաւորութիւն, ոգեւորված է բարեգործութեամբ եւ ուրախութեամբ կատարում է իր հօրաքրոջ կարգադրութիւնները։ Սակայն նա չէ կասկածում, որ հօրաքոյրը իր չար դիտումները առաջ տանելու նպատակով, բոլորովին կղզիացրել է նրան եւ շրջապատել իր գործակալներով, որպէս զի որբը երբէք չը կարողանայ հասկանալ իր վիճակը։

Սակայն Վալենտինան սկսում է զգալ, որ իր շուրջը մի ահռելի մեքենայալարութիւն կայ եւ որ նրա վրա նայում են շրջապատողները իբրեւ մի ցնորվածի վրա։ Ահա այդտեղ, այդ յայտնագործութեան մէջ է այն դրաման, որ ապարէզ է բերում հեղինակը Վալենտինայի դերի մէջ։ Վալենտինան սարսափով տեսնում է, որ նրա շուրջը կատարված բոլոր եղելութիւնները ոչ մի կապ չեն ունեցել իր անձի եւ արժանաւորութիւնների հետ, այլ միայն եւ միայն այն ոսկիների հետ, որ նա ունի իբրեւ ժառանգ։

Վալենտինայի դերը կատարեց դերասանուհի Պօլեակօվա, որ կարողացաւ աջող կերպով ներկայացնել անմեղ, բարեսիրտ, տանջված, գործունէութեան կարօտ, բայց թոյլ կամքի տէր որբ աղջկայ տիպը։ Դերասանուհին ողբերգական տեղերում չափազանց շատ է սրդմում իր ձայնը եւ դրանով վնասում է ուժեղ տպաւորութեանը։ Հօրաքրոջ դերում տիկին Գրիբունինա ցոյց տուեց իշխել սիրող եւ ուժեղ բնաւորութեան տէր պառաւ կնոջ տիպը, որ գիտէ անսահման համարձակութեամբ առաջ տանել իր ծրագիրները։

Պրավդին՝ Վալենտինայի եղբօր դերում՝ ներկայացրեց ռուս նորագոյն վաճառականների տիպը մեծ հմտութեամբ։ Աջող էին Եարլօչկինա, Պադարին, Իլյինսկի եւ միւսները, ներկայացնելով ռուսաց կեանքից մի խորշ իր բնորոշ գծերով։ Ք.

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ՐԻԳԱՅՈՒՄ

(Նամակ Րիգայից)

II

Յունիսի 1-ին, առաւօտեան ժամը $11^{1}/_{2}$-ին, կատարվեց Րիգայի յոբելեանական ցուցահանդէսի բացումը։

Գլխաւոր արդիւնաբերական չքեղ զարդարած դահլիճում հաւաքված էր երկու սեռից բաւական բազմութիւն, չը նայած քամուն եւ անձրեւային եղանակին։ Բացի ցուցահանդէսի վարչական ժողովի անդամներից, ներկայ էին հոգեւորականութեան, արքունական հիմնարկութիւնների, ազնուականութեան, քաղաքի, վաճառականական կօմիտէտի, Բալտիկ երկրի զանազան քաղաքների ներկայացուցիչները։ Այստեղ էին նաեւ տեղական հիւպատոսները, խմբագիրները, գրագէտները եւ ուրիշները։ Ժամը $11^{1}/_{2}$-ին եկաւ ուղղակի կայարանից ֆինանսների մինիստրի օգնական, գաղտնի խորհրդական Վ. Ի. Կօվալեվսկին։

Հիւրերին դիմաւորեց ցուցահանդէսի փոխնախագահ ինժեներ Ֆօն-Շուբէրթը ռուսերէն լեզուով արտասանած մի համառօտ ճառով։ Ապա ֆինանսների մինիստրի օգնական Վ. Ի. Կօվալեվսկի, բարեմաղթութիւններ անելով Թագաւոր Կայսրի համար, յայտարարեց ֆինանսների մինիստրի անունով ցուցահանդէսի պաշտօնական բացումը։ Հասարակութեան «ուռա»-ներին միացան զինուորական երաժիշտները, նուագելով 3 անգամ ազգային հիմնը։

Ապա ցուցահանդէսի նախագահ եւ պօլիտեխնիկումի պրօֆէսօր Լօվիսը դարձաւ դէպի ժողովականները մօտաւորապէս հետեւեալ գերմաներէն ճառով.

«Յարգելի հանդիսականներ. Արդիւնաբերական—արհեստագիտական ցուցահանդէսը, որի փառաւոր բացման համար մենք ժողովվել ենք այստեղ, իր ծագումը պարտական է մի ցանկութեան—յաւերժացնել մեր հռչակաւոր քաղաքի 700-ամեակը ոչ միայն աղմկալից զուարճութիւններով, այլ ամենից առաջ մի ձեռնարկութեամբ, որ վկայէր արհեստագիտական գործունէութեան եւ քաղաքի ու Բալտիկ երկրի բնակիչների խաղաղ մրցման մասին։ Այս միտքը, որ յղացել էր դեռ 1897 թւի նոյեմբեր ամսին Րիգայի արհեստագիտական ընկերութեան (gewerbeverein) ժողովներում, ամենից առաջ համակրութիւն գտաւ նոյն ընկերութեան վարչութեան կողմից, որ սկզբնական քայլերն անելուց յետոյ, թոյլտուութիւն ստացաւ մինիստրութիւնից, ինչպէս եւ առաջին արհեստագիտական ցուցահանդէսի ժամանակ 1883 թւին, կազմակերպել յոբելեանական ցուցահանդէսը։ Այսպիսով արդէն ապրիլից կարելի էր աշխատանքները սկսել, որոնք այժմս իրանց գլխաւոր մասերում վերջացրած կարելի է համարել։

«Րիգան վաղուց ի վեր վաստակել է Բալտիկ ծովի վրա աչքի ընկնող առեւտրական քաղաքի փառքը, շնորհիւ իր բնակիչների եռանդին եւ գործունէութեանը, իսկ վերջին տասնամեակը նա մտաւ արդիւնաբերող քաղաքների շարքը, աշխատելով Բարձրագոյն Կայսերական Տան եւ Ռուսաց հզօր կայսրութեան հովանաւորութեան ներքոյ շահագործել իր ծովեզրեայ դիրքը, յօգուտ կայսրութեան կուլտուրական բարօրութեան, գոլորշու եւ ելեքտրականութեան մեր դարի ոգով։

«XII դարի կիսում սաքսօնական ցեղից գերման վաճառականները գտան Դվինայի ափի երկիրը եւ նպատակ դրին ապրանքների փոխանակութիւն հաստատել այստեղ բնակվող կռապաշտ լիվերի հետ։ Առեւտրական գործունէութեանը շատ շուտ միացած եւ միսիոնէրական գոր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թռուցիկ տպաւորութիւններ)

III

Հասանք Վերօնա։

Կէսօր է. ինչ շոգ է այստեղ ապրիլի վերջերին. փողոցներում հովանոցները բազմաթիւ են, կայարանում խմբված է տօնական ամբոխ։ Աւելի բազմաթիւ են նրանք, որոնց գոյութիւնը այնպէս թէ այնպէս կապված է ճանապարհորդների հետ։ Իտալական քաղաքների առանձնայատկութիւնն է կասկածելի առաջնորդների մի ահագին բազմութիւն, կամ պղերգ, հացկատակ մարդկանց մի ամբողջ դասակարգ. սրանցից մի քանիսը միանգամից շրջապատում են ճանապարհորդին եւ իրանց ծառայութիւնն առաջարկում։ Ամենավճռական տօնով մերժում եմ բոլոր առաջարկութիւնները եւ անգլիացու պէս մենակ, առանց առաջնորդի, մտնում եմ անծանօթ քաղաքը։ Անմիջապէս ձեռք եմ բերում ուղեցոյց գրքոյկը եւ շրջում աչքի ընկնող պատմական յիշատակարանները տեսնելու։

Վերօնան իտալական այն քաղաքներից մէկն է, որի պատմութիւնը մենակ բաւական է արիւնոտ տարեգրութեան հատորներ կազմելու, Հռոմի փառքի ու անուան հետ է կապված նրա անունը եւ արեւմուտքի գոռոզ կայսրները իրանց պատմութեան հետքերն են գծել այստեղ հինաւուրց պարիսպներով եւ յաղթական մուտքերով, որոնցից նմուշներ են մնում միայն։

Առաջին հնադարեան յիշատակարանը, որ գրաւում է ճանապարհորդի ուշադրութիւնը, դա հռոմէական ամֆիթէատրոնի հսկայ, զանգուածային շէնքն է Վիկտոր-Էմմանուէլ հրապարակի վրա, որ համարեա ամբողջապէս մընում է, ծաղրելով ժամանակի աւերիչ ոգին։ Անհատի մի ժեստը երբեմն նրա ամբողջ էութիւնն է ներկայացնում. ժողովուրդների մի հատիկ ձեռագործը, որպէս նրանց հանճարի ցոլք, պատմական մի ամբողջ էպօխա է ներկայացնում բնորոշ կնիքով։ Հին քաղաքակրթութեան երկիրներում յիշատակարաններ կան, որոնք մենակ իրանց վրա կրում են այդ ամբողջ անցեալը ու իրանց քար լռութեամբ անգամ աւելի պերճախօս են, քան գրված յիշատակարանները։ Եգիպտական բուրգերը մի մի գոռոզ փառաւորներ չեն, բազմած միլիոնաւոր ստրուկների, տառապող ժողովրդի ծռված, կռչկռճած մէջքերին։ Այսպէս է նաեւ այս ամֆիթէատրոնը. անհնարին է նայել առանց բացականչելու՝ «ահա Հռոմը»։ «Հաց եւ զուարճութիւն» ճչացող ժողովուրդն է այս՝ իր Ներոններով հանդերձ։ Այս շէնքը իր գեղարուեստականութեամբ չէ, որ տպաւորութիւն է գործում, ինչպէս յունական գրաւիչ յիշատակարանները, ուր նրբութիւնը, վայելչութիւնը եւ ներդաշնակութիւնն է իշխում. այստեղ մի ուրիշ բան կայ, որ կարելի է մօտաւորապէս արտայայտել այս խօսքերով՝ «խեղդող, ընկճող, անսիրտ մեծութիւն»։ Արդարեւ ամեն ինչ ճնշում է այստեղ՝ եւ խոշոր ու անճոռնի քարերը, որոնք իրար վրա շարված են ասես հրաբուղխի թափով, եւ այս հնադարեան ահագին կամարները, եւ վերից դէպի երկինք ուղղված այլանդակ բացուածքները, որոնք կարծես հրէշների անճոռնի երախներ լինեն, որ հեգնում են տիեզերքի անհունութիւնը։

Ներս եմ մտնում։ Ձուաձեւ ընդարձակ հրապարակի շուրջը դէպի յետ գնալով իրար վրա բարձրանում են քարեայ անթիւ աստիճաններ, ուր կարող են նստել մի քանի տասնեակ հազար հանդիսականներ։ Բարձրանում եմ վեր, դիտում վարի կրկէսը, ուր այնքան ժամանակ ոճիրները ծափահարվում էին, գազանութիւնները՝ հրճուանք յարուցանում, ուր առիւծների ճիրաններով յօշոտված մարդկային էակների արեան գոլորշին վեր էր բարձրանում, տարածվում այս խիտ աստիճանների վրա բազմած մեղկ հանդիսականների գլխին, շշմեցնում, հարբեցնում էր նրանց եւ մղում դէպի նոր արիւն, նոր ոճիր, նոր, ցնցող տպաւորութիւններ։ Լուռ են այժմ կամարները, գազաններ ու զոհեր դուրս չեն սողում վանդակապատ դռների ետեւից. անձրեւը լիզել, լղկել է քարերի երեսը, գետինը դարեր առաջ ծծել է արդէն թափված արիւնը, բայց շէնքը կայ տակաւին ամբողջութեամբ եւ իր լռութեան մէջ անգամ խօսում է արիւնից։ Դարեր կան, որոնց զուարճութիւններն էլ ահաւոր են մեզ. ապագայ դարերն էլ չեն սոսկայ արդեօք մեր ժամանակի սերնդի «զուարճութիւններից» ու վայելքներից. արեան եւ կենդանի մսի կուլտը դադարել է արդեօք։ Իդէայի յաղթանակը դանդաղ է կատարվում. ինչ փոյթ, ապագան նրանն է, բուրգերի եւ ամֆիթէատրոնների հիմքը Պլատոններն ու Արիստոտելներն են փորում, մտքի էվօլիւցիան ժամանակից էլ զօրեղ է, երբ պէտք է քանդել մգլած, խաւար հասկացողութիւնների դարաւոր շէնքերը։

Թողնում եմ ամֆիթէատրոնը եւ շտապում եմ տեսնել բուն քաղաքը, հին Վերօնան։ Այս քաղաքի արտաքին տպաւորութիւնն այնպէս է դեռ, ինչպէս նրան թողել է վերածնութեան դարը։ Թւում է, թէ ամբողջ դարեր անցել են նրա վրայով առանց երբէք աւրելու այն ժամանակի կնիքը, երբ միստիցիզմից եւ արիւնհեղութիւնից յոգնած մարդկային միտքը բարձրացաւ աւերակների միջից գեղարուեստն ու գիտութիւնը իր լուսաւոր թեւերի տակ ածունէութիւնը եւ քրիստոնէութիւն մտցնելու եւ տարածելու հետ միաժամանակ հիմնվեց Իքսկիւլի գաղութը, որին հետեւեց Րիգայի հիմնվելը Բրեմէնի մայր եկեղեցու ազդեցիկ միաբան եպիսկոպոս Ալբէրտի ձեռքով 1201 թւին։

«Այսպիսով ծագեց Րիգան եւ դարձաւ եպիսկոպոսի նստավայրը, իսկ նրա բնակիչները պարապում էին առեւտրով եւ արհեստով իրանց բէգէնտի հովանաւորութեան տակ, որը ստեղծելով գործունեայ քաղաքական կառավարութիւն, կարողացաւ նաեւ Լիֆլիանդիայում հիմնել սուսերակիր ասպետների կարգը թէ պաշտպանվելու կռապաշտ լիվերի արշաւանքներից եւ թէ շարունակելու իր գաղթականական գործունէութիւնը։ Այս գործերով հեռատես քաղաքական գործիչը, որը մեռաւ 1229 թւին, սկիզբ դրեց քաղաքի բարգաւաճման եւ նրա կուլտուրական ազդեցութեան։ 1253 թւին Իննօկէնտիոս IV պապը դարձրեց Րիգան արքեպիսկոպոսի աթոռանիստ քաղաք։ Դրանով քաղաքի ազդեցութիւնը աւելի զարգացաւ։ Իսկ երբ Րիգան մտաւ Հանզայի դաշնակցութեան մէջ, առեւտուրը սկսեց ծաղկել եւ արագ աճել։

«Հետեւեալ դարերում Րիգայի եւ Լիֆլիանդիայի պատմութիւնը պատերազմական է. զգալով իր ոյժը, քաղաքը հրաժարվում էր ենթարկվել արքեպիսկոպոսին աշխարհական խնդիրներում։ Մի քանի ներքին երկպառակութիւններից եւ պատերազմներից յետոյ XVI-րդ դարի կէսում Լիֆլիանդիան կորցրեց իր ինքնուրոյնութիւնը եւ Րիգան ընկաւ Լեհաստանի իշխանութեան տակ։ Րէֆօրմացիան մուտք գործեց Րիգա 1523 թւին *), իսկ 1581 թւին Ստեփան Բաթօրին ապահովեց կրօնի ազատ դաւանանքը։

«Պապականութեան եւ րէֆօրմացիայի մէջ տեղի ունեցած կռիւը առաջացրեց Րիգայում եւ Լիֆլիանդիայում շվեդօ-լեհական պատերազմը, որի ժամանակ Րիգան նուաճեց Գուստաւ Ադօլֆը։

«Շվեդական իշխանութիւնը չը տեւեց 100 տարի, որովհետեւ դարը մտնելուն պէս, սկսվեց մեծ հիւսիսային պատերազմը. 1710 թւի յուլիսի 4-ին, երկար եւ սոսկալի պաշարումից յետոյ, Րիգան անձնատուր եղաւ ռուսներին եւ այդ ժամանակվանից ի վեր Րիգան եւ իր շրջակայքը կազմում են ռուսաց կայսրութեան արեւմտեան բնական սահմանը Բալտիկ ծովի ափում»։

Զ. Գեղամեանց

ՆԱՄԱԿ ԲԱԼԱԽԱՆԻԻՑ

Յունիսի 2-ին

Շովինիստական սկզբունքներով տոգորված «Каспій» լրագրի № 117-ում մի թղթակցութիւն կար, ուր սրտառուչ կերպով նկարագրված է, թէ ինչպէս չուչեցի Նասիր Ալի-օղլին իր ընտանիքով Խօջալու գիւղից վերադառնալիս՝ իջել է Ղալադարասի գիւղի արտերի մօտ հանգստանալու եւ երեխաները արտերն են մտել ծաղիկ հաւաքելու, բայց բարբարոս ղալադարասեցի հայերը, մեծից մինչեւ փոքրը, վրա են թափվել, ջարդել ծաղիկ հաւաքող երեխաներին ու կնոջը, իսկ Նասիրին՝ սպանել։

Թէ որքան ճիշդ է փաստը, որ լոկ ծաղիկ կտրելու համար հայ գիւղացիները մարդ են սպանել ու երեխաների ոտք ու ձեռք ջարդել, թողնում ենք հաղորդողի պատասխանատւութեան ու խղճին. բայց որ թղթակիցը, յետին մտքեր ունի՝ ուրանալ չէ կարելի։

Նա ասում է, որ Տեղ գիւղումն էլ հայերը մուղանլուեցի մի թուրք սպանեցին, բայց մուղանլուեցիները մի այնպիսի դաս կարդացին հայերի գլխին, որ սրանք պոչերը ծալեցին։ Մի առանձին մոլի անապարծութեամբ թղթակիցը կանչում է, որ մի ազգակցի փոխարէն՝ մուղանլուեցիները տաս հայ սպանեցին. կարծես նա կոչ է անում, որպէս զի չուչեցի թուրքերն էլ ուշքի գան եւ այդպիսի մի դաս էլ ղալադարասեցիներին տան։

Ափսոս, որ այս թղթակցի նման քարոզիչներ քիչ ունենք, թէ չէ՝ գառն ու գայլը Ղարաբաղում միասին կապրէին... Եւ որքան զգայուն է այս մարդը. նրա սիրտը կտոր-կտոր է լինում, ճմլվում է այսպիսի գազանութեան առաջ։ Բայց թող ներէ թղթակիցն իրան հարցնելու, թէ՝ նա Ավդալ, Գելափլու, Շէլլու, Մուղանլու եւ այլ թուրք գիւղերի բնակիչների աշխարհահռչակ սխրագործութիւնների մասին հասկացողութիւն ունի, որ մի կաթիլ արտասուք էլ նրանց զոհերի վրա կաթեցնէ... Եթէ գիտէ, էլ ինչո՞ւ կամովին Զաքարիայի պապանձմանն է ենթարկվում հայերի վերաբերմամբ, իսկ թուրքերին ներկայացնում է իբրեւ մի մարտիրոս ժողովուրդ։

Թէ հայերն իրանց հարեւան թուրքերից ինչ օր են տեսնում, եթէ ոչ ամբողջ աշխարհին, գոնէ Կովկասին յայտնի է. ուրեմն ինչ նշանակութիւն ունի կանգնել ու գոչել.—հա՛յ, մէկի տեղ տասը, տասի տեղ քսան...

Ղալադարասեցիներին արդարացնելու միտք չունենք. գազանութիւնն ամեն տեղ գազանութիւն է, մանաւանդ եթէ այդ իսկապէս ծաղիկ քաղելու համար է եղել։ Բայց ինչ իրաւունք ունի թղթակիցը այդ տեսակ վրէժխնդրական եղանակով երկու հարեւանների մէջ խրամատ բանալուն նպաստելու, կամ՝ եղածն աւելի լայնացնելու. Ա՞յդ են պահանջում խաղաղ զարգացման շահերը. Ա՞յդ տեսակ կոչեր են հարկաւոր երկու հարեւան ազգերի բարօրութեան համար։

Ամօթ է, ամօթ...

Մի բան միայն մխիթարական է, որ այդ թղթակցութիւնը «Каспій»-ումն է տպագրված։

Մ. Տէր-Դանիէլեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 30-ին

«Մշակի» 108 համարում Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցու հին երէցփոխ պ. Ս. Ղամազեանցի ընդդիմախօս նամակն էր տպված, որի մասին երկու խօսք եմ ուզում ասել։

Ասել եմ հրապարակով եւ դարձեալ համարձակ կրկնում եմ, որ հակառակ իմ ցանկութեան, Թանդոյեան եկեղեցին զրկվել է քառաձայն երգեցիկ խմբից միայն եւ միայն այն պատճառով, որ ես հաստատութեանս օրից՝ 1901 թ. փետրվարի 28-ից մինչեւ այսօր ոչ մի հաշիւ չեմ ստացել։ Հաշիւ չը ստանալու հետեւանքն են եղել շատ զրկանքներ, որոնցից միայն մէկն էր ես յիշատակել «Մշակի» 102 համարում, որ է խմբի արձակումը։ Պ. Ղամազեանցը ամեն ճշմարտութիւն ոտնատակ տալով, գրում է, որ մարտի 17-ին յանձնել է իմ եւ Յարութիւն քահանայ Ծուղուրեանի ներկայութեամբ գործակալ հօրը եկեղեցական փողը, 1901 թ. հաշւեմատեանը եւ եկեղեցական գործերը։ Իսկ ես նոյն գործակալից ստանում եմ ապրիլ 12-ին, այսինքն պ. Ղամազեանցի գործերը յանձնելուց 25 օր վերջը, պաշտօնական գրութիւն № 207, որով պատուիրում է ինձ հրաւիրել ծխական ժողով երէցփոխից ստանալու հաշւեմատեանները, նաեւ պատշաճ ստացողական եւ յանձնողական ցուցակը եկեղեցու կալուածների եւ գոյքերի։ Նոյն պաշտօնական գրութեան հետ միասին ծանուցանում է ինձ, որ գրած է նաեւ հին երէցփոխին, այսինքն «Մշակի» 108 համարում ընդդիմախօսութիւն գրող Ս. Ղամազեանցին «Վասն պատրաստելոյ զհաշիւս, վասն մատուցանելոյ ի քննութիւն ծխականաց ի 22-ն ապրիլի տարւոյս»։ Ուրեմն էլի կրկնում եմ, որ ես ոչ մի հաշիւ չեմ ստացել մինչեւ օրս։

Ապրիլի 22-ին նշանակած ծխական ժողովին պ. Ս. Ղամազեանցը չէր բարեհաճել ներկայ լինել եւ չէր մտածել, որ հաշիւները գոնէ ուղարկէ. նրա բացակայութեան հետեւանքն եղաւ նոյն ամսի 29-ի ծխական երկրորդ հրաւէրը, հիմնված գործակալի գրութեան № 238 այս բովանդակութեամբ՝ «յայտնել հաշւետուաց եկեղեցւոյդ ի 29-ն ամսոյս ներկայ լինել յեկեղեցւոջ առ ի յանձնել նոցա զհաշւեմատեանս հնոյ երէցփոխանի վասն քննելոյ զհաշիւս»։ Այդ ժողովն էլ չը կայացաւ պ. Ղամազեանցի հաշիւներ չը ներկայացնելու պատճառով։ Հետեւապէս պարոնը ոչ մի հաշիւ չէ տուել եւ խուսափում է տալուց մեզ անհասկանալի պատճառով։

Երէցփոխական պաշտօնս վարելու համար հայր գործակալից ստացել եմ 1901 թ. մի մատեան առանց որ եւ է փոխանցումի, որ միանգամայն օրինաւոր չէ։ Հայր գործակալից մարտի 2-ին № 107 գրութեամբ պ. Ղամազեանցը ստացել է հրամանագրութիւն, որով յայտնվում է նրան, որ ազատ է համարված իր պաշտօնից, այն ինչ նոյն ամսի 13-ին ապօրինի կերպով ստացել է եկեղեցական կալուածների կապալառուից մարտ ամսի կապալադրամ 317 ր. 90 կ. եւ չէ մուծել մատեան. այդ գումարից հայր գործակալին է յանձնել 295 ր. 25 կ.։ Եթէ այդ գումարի մասին է պարոնի խօսքը, ապա ուր է մնացած 22 ր. 65 կ.։ Ուրեմն պ. Ղամազեանցը պաշտօնազուրկ դէպքում համարձակվում է ինձ հասանելի 317 ր. 90 կ. կապալադրամը ստանալ, 22 ր. 65 կ. պահել եւ հրապարակով ասել, թէ եկեղեցու գումար է յանձնել։ Իսկ եթէ մի րոպէ ընդունենք, որ պարոնը նախանձախնդիր էր եկեղեցական գործերի մաքրութեան ու հաշւետւութեան եւ գործակալ հօրը տուած հաշիւը վերջնական հաշիւ է համարում, ապա ուր են ըստ իր ցոյց տուած տարեկան 5000 րուբլի եկամուտը, որ երեք տարվայ ընթացքում կանէր 15,000 րուբլի։ Այդ խոշոր գումարի մնացորդը 295 ր. 25 կ. էր, թէ այս միայն փշրանքն էր։

Պարոնը իր նամակի վերջում ինձ պատիւ է անում իր տունը հրաւիրելու, որպէս զի իմ կարծեցեալ հաշիւները տայ։ Եթէ ես մինչեւ այսօր չեմ գնացել, այդ բանի պատճառը հետեւեալն է. նախ՝ այդ իրաւունքը պատկանում է ծխականներին եւ երկրորդ՝ չէի կարող գնալ, որովհետեւ գործակալ Գրիգոր քահանայ Մանդակունու, Ներսէս քահանայ Ղամազեանցի (ինչու ներկայ եղողների թւում մոռացել է պարոնը եւ իր տանէրէց հայր Ղամազեանցին) եւ Յար. քահ. Ծուղուրեանի ներկայութեամբ մարտի 17-ին, փոխանակ հաշիւները մարդավարի տալու, փողոցային հայհոյանքներ թափեց բոլորիս գլխին, որ արժան չէի համարի մեր եկեղեցու մղդսիններին անգամ նրա տան ճանապարհը ցոյց տալու։ Ես մինչեւ օրս ինձ հաշիւ տալ չեմ կարող, թէ ինչու գործակալ աւագ քահանան իր պաշտօնավարութեան ժամանակ տարաւ այդ, առանց արձանագրութիւն կազմելու, կամ ինչպէս մինչեւ այսօր լռել են ինձ հետ միասին անարգանքից դառն վիրաւորանք ստացող Ներսէս քահ. Ղամազեանցը եւ Յարութիւն քահ. Ծուղուրեանցը։ Ինձ հասցրած վիրաւորանքին տուել եմ արժանի պատասխանը,

Պ. Ղամազեանց նամակը վերջացնում է բարի խորհուրդներով։ 320 րուբլի եկամուտից 55 րուբլիով խմբին վարձատրելը ճշմարիտ որ դժուար եւ ծանր բան չէ. իսկ երբ 320 րուբլու փոխարէն երէցփոխի առաջ բարդվում են պարոնի պաշտօնավարութեան ժամանակամիջոցում չը վճարված հազարների պարտքեր, որոնցից 108 ր. 55 կ. տուգանք է, ինչ կարող էի անել, որքան էլ որ սրտիս մօտ լինէր քառաձայն խումբ պահելը։ Չը նայած աւելի քան հազար րուբլի վճարածս պարտքերին, դարձեալ եկեղեցին մնում է պարտք մինչեւ 600 րուբլի, բացի առօրեայ ծախսերից։

Ասածներիս ստուգութեան համար ներկայացնում եմ յարգելի խմբագրութեանդ բոլոր փաստաթղթերը, իսկ յարգելի ծխականներին կը խնդրէի մտնել Թանդոյեան եկեղեցին տեսնելու պ. Ղամազեանցի երեքամեայ գործունէութեան էջերը, իսկ ամփոփ պատկերը պ.պ. հաշւետեսները շատ շուտով կը դնեն ծխականների առաջ։

Երէցփոխ՝ Խ. Տէր-Մարգարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրները հաղորդում են, որ յունիսի 4-ին, ցերեկվայ $2^{1}/_{2}$ ժամին, Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Ս. Գօլիցին հասաւ Պետիգօրսկ։ Պետիգօրսկ կայարանում իշխանին դիմաւորեցին զինուորական եւ քաղաքացիական վարչութիւնների պաշտօնեաները, իսկ քաղաքը մատուցեց աղուհաց Պետիգօրսկ քաղաքի կողմից։ Նոյն օրն երեկոյեան իշխանը գնաց Կիսլօվոդսկ, իսկ այնտեղից էլ գնալու է Պետերբուրգ։

—

Մեզ հաղորդում են, որ վաղը, կիրակի, ամսիս 10-ին, տեղի կունենայ Տափի-Թաղի ս. Գէորգ եկեղեցու հիմքի օրհնութեան հանդէսը։ Եկեղեցու վերաշինութեան մասնաժողովը ընտրել է քաղաքի զանազան հիմնարկութիւններից եւ ծխի ներկայացուցիչներից վիմակիր-կնքահայրներ 16 հատ օծված քարեր դնելու համար։ Նախապէս, առաւօտեան, ժամի 9-ին, Ջգրաշէնի եկեղեցում տեղի կունենայ պատարագ, որից յետոյ թափորը կերթայ դէպի նոր կառուցվող եկեղեցին։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիս քաղաքի բուսցրած անտառը, որ վաթսուն դեսեատին

ռած։ Փողոցները տեղ-տեղ այնքան նեղ են, որ հազիւ 2—3 հոգի կողք-կողքի անցնեն. շինութիւնները խիտ առ խիտ իրար վրա կուտակված, ժամանակից սեւացած, թւում է, թէ ամբողջ դարեր մարդկային ձեռքը չէ փոխել նրանց փոքրիկ ծեփը, չէ շարժել եւ ոչ մի քար։

Ուշադիր դիտողի համար սակայն այդ աչքից ընկած՝ մեռնող հնութեան մէջ հին գեղարուեստի սիրուն նմուշներ կան պահված. այս ու այն անկիւնում, մի խուլ փողոցի ճակատի առաջ, ուր ճարտարապետական մի գրաւիչ զարդ, մի մօզաիկ, մի դորիական սիւն, գօթական ճաշակի շրջանակով եզերված մի լուսամուտ կամ մի սիրուն պատշգամբ աչքի է ընկնում մոյգ ֆօնի վրա։ Այս նեղ ու գալարուն փողոցները պրօֆանի համար անտանելի են եւ խեղդող, իսկ գեղարուեստագէտի համար երբեմն գոհարներ են պարունակում. այստեղ սովորական տների հետ խառնիխուռն կանգնած են նաեւ հինաւուրց քարեայ պալատներ, որոնց հետ կապված են պատմական նշանաւոր անձինքների յիշատակներ։ Երբեմն այնպիսի փողոցներում, խուլ բակերում պարտէզներ են պատահում, ուր բնակութիւն ենթադրելն անգամ դժուար է, բաց դռներից բակի խորքում մի պատի վրա երեւում է որ եւ է սիրուն նկար անձրեւից ծեծված եւ ծառերի սաղարթներով կիսածածկ, նրա կողքին էլ մի փոքրիկ արձան, մի աւազան։

Երբեմն երբեմն այս ու այն խուլ անկիւնից, այս ու այն կորած տնից լսվում է ախորժելի երաժշտութեան ձայն, երգ, նուագածութիւն. տեղացիների փոյթը չէ, նրանք սուլելով անցնում են, իսկ օտարականը կանգ է առնում եւ ախորժանքով ականջ է դնում։ Իտալական քաղաքներում երաժշտութիւնը, քանդակագործութիւնն ու նկարչութիւնը ի ցոյց են հանված փողոցներում։

Վերօնայում հրապարակները փոքր են, բայց ուշագրաւ իրանց արձաններով։ Ահա Վերօնայի փառքը, Պաօլօ Վերօնացին, կամ ինչպէս կարճ կերպով անուանում էր ինքն իրան՝ «Վերօնէզը» (1528—1588) մեծ կոլօրիստը, վենետիկեան նկարչական շկօլայի ամենակատարեալ, ամենատիպիքական ներկայացուցիչը, որի բեղմնաւոր վրձինի տակ դուրս եկած նկարները լցրել են իտալական եկեղեցիները եւ եւրօպական գեղարուեստական միւզէյները։ Մի ուրիշ հրապարակի վրա Դանտէն է բարձրանում իր մտախոհ ու չորացած դէմքով, ուր կրօնական խորհրդաւորութիւնը խառնված է գեղարուեստական թռիչքի եւ խորունկ վշտի հետ։ Այստեղ է Սկալիգէրի տոհմի պալատը եւ մաւզօլէն, գեղարուեստական մի դիւթիչ ձեռագործ, իր նուրբ սիւներով, մանր, գօթական բուրգերով, որոնք ամենքը միասին խառնվում, բարձրանում են որպէս մի սիրուն խուրձ։

Չը կայ մի ամենափոքր հրապարակ, ուր գէթ մի հատ գօթական եկեղեցի չը լինի, եւ չը կայ մի հատ սովորական, կամ նոր եկեղեցի. ամենն էլ հին են, միջին դարերից, ու ամենն էլ գեղարուեստական, ճարտարապետական մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում։

Այս բոլոր գեղարուեստական յիշատակարաններից ո՛չ պակաս այցելուներ է գրաւում նաեւ մի տուն, ուր ապրել է ու տանջվել Շէքսպիրի Ջիւլիէտտան։ Փողոցը, ուր գտնվում է այդ շէնքը, քաղաքի ամենախեղճ անկիւններից մէկն է. նեղ լուսամուտներով, խարխուլ եւ թափթփված մի փոքրիկ տուն է։ Մուտքի ճակատին դրսից կարդացվում է հետեւեալ արձանագրութիւնը՝ «Այս է Կապուլետտի ընտանիքի տունը, ուր ծնվեց Ջիւլիէտտան։ Նրա վիշտը ողբացին այնքան զգայուն սրտեր եւ երգեցին այնքան բանաստեղծներ»։ Ներս եմ մտնում բակը. այստեղ դեռ ցոյց են տալիս այն լուսամուտը, ուր ուղղում էր Ռօմէօն իր սիրակէզ հայեացքը Ջիւլիէտտայի դիւթիչ պատկերը նշմարելու համար։ Բակում կանգնած է մի չիկահեր աղջիկ, սիրուն, չարաճճի դէմքով. նա մի կողմից խաղում է գրկած երեխայի հետ եւ միաժամանակ իտալուհու այն համարձակ հայեացքով նայում է օտարականին առանց զարմանքի. նա այցելուներ շատ է տեսել։ Մի մարդ մրթմրթալով քաշքշում է իր սայլակի կապերը եւ լծում է մի նիհար ձի հէնց Ջիւլիէտտայի լուսամուտի տակ, ինչ ասել կուզի մտքի մէջ ծիծաղելով այցելուների վրա, որոնք գալիս են նայելու այս ողորմելի տունը, ուր չը գիտեմ ով՝ ումն է սիրել։ Վերին յարկերի լուսամուտներից բազմաթիւ կանացի գլուխներ են երեւում. նայում են վար կէս հետաքրքիր, կէս չարաճճի աչքերով, ո՜վ գիտէ գուցէ մի-մի Ջուլիէտտաներ, նոյնպէս սիրող, գուցէ եւ նոյնպէս վշտոտ։

Քանի՜ քանի միլիօնների հոգու խորունկ ցաւեր աշխարհի ամեն կողմերում կորչում են անյայտութեան ծոցում, ամենքից գաղտնի թաղվում են տէրերի կրծքերի տակ յաւիտեան։ Շէքսպիրները հսկայ են հէնց նրանով, որ մի կորած անհատի, մի թոյլ էակի, մի փոքրիկ աղջկայ վիշտը կարողանում են տիեզերական դարձնել. առանց մի հանճարեղ գրչի՝ այս ողորմելի տունը, իր կեղտոտ բակով, ուր նիհար ձին քաշքշում է մի վատ սայլակ, իր փլփլած պատերով, իր մութ, ողորմելի բնակիչներով, ո՞ւմ ուշքը կարող էր գրաւել։ Ի՞նչ է Շիլեօնը առանց Բայրօնի եւ ո՞ւր չը կան աւելի զարհուրելի Շիլեօններ եւ հազար անգամ աւելի դժբաղդ Բօնիվարներ։ Հանճարը սրբագործում է վշտի վայրը, որքան եւ խեղճ լինի նրա պատկերը եւ վուլգար իրականութեան վրա ձգում է յիշատակների եւ խորը զգացմունքների կրթիչ քողը։ Ջիւլիէտտայի տունը այդ քողով է գրաւիչ։

Ա. Ահարոնեան

---

*) Րիգայում րէֆօրմացիայի առաջին առաքեալներն էին. Անդրէաս Կնիօպկէն և Սիլվեստր Տէգէտմայեր։

տարածութիւն ունի, աճում է աջող կերպով եւ կարող է ժամանակով քաղաքի ամենամեծ զբօսավայրը դառնալ։ Այդ անտառը բուսցրած է առանց ջրելու։ Նա բաւականանում է անձրեւների ջրերով, որ ժողովելու համար առանձին կերպով մշակված է անտառի հողը։ Անտառը բուսնում է ապահով կերպով, բայց դանդաղ։ Մի յատուկ յանձնաժողով, որ զբաղված է քաղաքի անտառի եւ այգիների հսկողութեան գործով, ցանկանալով արագացնել անտառի աճումը, ներկայումս ջանքեր է անում ջուր գտնելու անտառները ոռոգելու համար։

—

Թիֆլիսում հիմնվող «Հայոց դրամատիկական ընկերութեան» կանոնադրութեան նախագիծը, ինչպէս հաղորդում է «Нов. Обозрѣніе» լրագիրը, քննել է Թիֆլիսի նահանգական վարչութիւնը եւ առաջարկել է մեր երկրի բարձր վարչութեան հաստատութեանը։

—

Յունիսի 2-ին տեղի ունեցաւ միջնակարգ դպրոցների բարենորոգութեան համար կազմված յանձնաժողովի հինգերորդ նիստը ժողովրդական լուսաւորութեան մինիստրի նախագահութեամբ։ Յանձնաժողովն սկսեց քննել դասացուցակը, որ սկսվել էր նախորդ նիստում։ Օրէնսգիտութեան դասաւանդութեան հարցը քննելու ժամանակ յանձնաժողովը անհնարին համարեց միացնել այդ առարկան պատմութեան հետ, ինչպէս մտադրութիւն կար առաջ։ Ընդհանրապէս օրէնսգիտութեան դասերը վճռված է սահմանափակել։ Վճռված է օրէնսգիտութեան ուսումնասիրութիւնը մտցնել վերջին երկու դասարաններում, շաբաթական երկու ժամ յատկացնելով այդ առարկային իւրաքանչիւր դասարանի համար։ Հայրենագիտութեան դասընթացքը պէտք է աւարտվի 6-դ դասարանում։ Մտադրութիւն կայ այդ առարկայի ուսումնասիրութիւնը սերտ կերպով շաղկապել աշխարհագրութեան հետ, որին վճռված է յատկացնել ընդհանրապէս բոլոր դասարանների համար շաբաթական 15 դաս։ Լատիներէն դասերի հետ միաժամանակ կը դասախօսվեն գծագրութեան, բնական գիտութեան դասերը այն աշակերտների համար, որոնք չեն սովորի լատիներէն լեզուն։ Բացի դրանից յանձնաժողովը բարենպատակ է համարում աւելացնել մարմնամարզութեան եւ զինուորական ֆիզիքական մարզութիւնների դասերը։ Բացի դրանից յանձնաժողովը օգտաւէտ է համարում մտցնել գիմնազիաներում շարժական խաղեր, ձեռքի աշխատանք եւ կանոնաւոր դպրոցական էքսկուրսիաներ ու զբօսանքներ։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ Մեզ գրում են. «Այսօր առաւօտեան, յունիսի 5-ին, Նոր-Բայազէտի ռուսաց քաղաքային ուսումնարանի աշակերտները դուրս եկան քաղաքից ճանապարհորդութիւն կատարելու դէպի Թիֆլիս։ Աշակերտները 22 հոգի են, չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ դասարաններից ընտրված։ Ճանապարհածախս իւրաքանչիւրը վճարել է 8 րուբլի։ 140 ր. նոյն նպատակով ուսումնարանն է տուել։ Աշակերտների հետ է նաեւ ամբողջ ուսուցչական խումբը, որը հասնելով Թիֆլիս, կը բաժանվի աշակերտներից՝ տուն գնալու, իսկ պ. Հ. Տէր-Միքայէլեանը, որ Նոր-բայազետցի է, կը վերադառնայ աշակերտների հետ»։

—

ԳՈՐԻՍԻՑ մեզ գրում են. «Ամառը եկաւ. շաբաթներով տեղացող անձրեւներից յետոյ ահա քանի օր է, որ շոգեր է անում եւ այս պատճառով էլ այստեղի զօրքերը գնացին ամառանոց զանազան տեղեր՝ Սուրամ, Բորժոմ, Դուշէթ, Վլադիկավկազ եւ Թէլաւ։ Սրանց հետեւեցին եւ ուսումնարանի աշակերտները, որոնք, քննութիւնները վերջացնելով, հեռացան այստեղից, այնպէս որ քաղաքը բոլորովին դատարկվեց։ Անտանելի տխրութիւն է տիրում ամեն կողմ. ոչ քաղաքային այգի ունենք, ոչ էլ բուլվար, ուր կարելի լինի օրական մէկ երկու ժամ գնալ եւ մաքուր օդ ծծել այնպէս որ մեր Գորու հասարակութիւնը զբօսնում է փողոցներում միայն, որտեղ [illegible] օդ ծծելու տեղ բաւական փոշի է կուլ տալիս։ Փողոցները մեզանում չեն ջրվում, իսկ այստեղի մշտական քամին, որ մէկ րոպէ չէ դադարում, բարձրացնելով փողոցների փոշիները, պատուհաններից եւ դռներից ներս է լցնում սենեակների մէջ, այնպէս որ սենեակներումն էլ չենք կարողանում ազատ լինել փոշի կուլ տալուց։ Մեր քաղաքի հայրերը ամենեւին չեն էլ մտածում հասարակութեան կարիքների մասին, կարծես թէ նրանք ընտրված են միայն քնելու համար։ Երեւակայեցէք, մեզանում կատարեալ մեծ պաս է, շաբաթներով մսի համ չենք տեսնում. մսի գինը նշանակված է ֆունտը 9 կոպ., իսկ մենք ամենայն ուրախութեամբ վճարում ենք 12 կոպ., դարձեալ միս չենք կարողանում ունենալ։ Մսավաճառները, չը խնայելով մեր ատամները, ուտեցնում են մեզ պառաւ գոմէշի կամ պառաւ այծի միս»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Բագուի նահանգական դատարանի բաժինը Ղուբա եկաւ եւ այսօր, յունիսի 5-ին, սկսեց դատավարութիւնը. կը մնայ այստեղ մինչեւ սեպտեմբերի մէկը։ Առ այժմ այստեղ նշանակված են մօտ իննսուն գործեր մինչեւ օգոստոսի մէկը։ Եկել են եւ գալու են Բագուից տասնից աւելի փաստաբաններ. ուրիշներն էլ գալիս են ամեն օր այստեղ, որպէս ամառանոց։ Անձրեւներից յետոյ շոգ օրեր են անում, իսկ երեկոները միանգամայն հով է եւ մինչեւ անգամ ցուրտ»։

—

ՇՈՒԼԱՒԷՐԻՑ մեզ գրում են. «Մեր տանուտէր պ. Մեհրաբեանը հիւանդութեան պատճառով երեք ամիս արձակուրդ ստանալով նահանգապետից, գնում է ամառանոց։ Ասում են, որ պարոնը մտադիր է աշնանից բոլորովին թողնել պաշտօնը։ Գուցէ տեղապահի ընտրութիւն լինի, բայց պէտք է ասած, որ մեր մէջ օրինաւոր մարդկանց սով է եւ պարոնի հեռանալը շատ զգալի կը լինի։ Թէեւ ամեն մի մարդ էլ ունի իր պակաս կողմերը, բայց պէտք է ճիշտը խոստովանած, որ Շուլաւէրը մինչեւ այսօր Մեհրաբեանի պէս օրինակելի տանուտէր չէ ունեցել։ Պ. Մեհրաբեանը երեք անգամ ընտրվել է միաձայն, ռաչպար եւ արհեստաւոր դասի սիրելին է, չորս տարի է ծառայում է հասարակութեանը եւ նրա շնորհիւ մեր գիւղը շատ փոփոխութիւններ ու օգուտներ է կրել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Լայպցիգ, յունիսի 13-ին

Վերջերս ուսանող պ. Վահան Նալբանդեան փայլուն աջողութեամբ իր դոկտորական բերանացի քննութիւնը տուաւ՝ Լայպցիգի համալսարանի պատմական-փիլիսոփայական բաժնին մէջ՝ յայտնի պրոֆէսորներ Լամպրէխտի (պատմութիւն) եւ Վունդտի (նոր փիլիսոփայութեան պատմութիւն) մօտ։ Գրաւոր աշխատանքը, որ «Leopold Rankes Bildungsjahre und Geschichtsauffassung» վերնագիրը կը կրէ, ընդարձակ, լուրջ եւ երկարօգի ուսումնասիրութիւն մըն է Ռանկէի մասին, որ տարօրինակ բեղմնաւոր գործունէութիւնը ունեցած է անցեալի դէմքերն ու դէպքերը թանձր հատորներու մէջէն մեզի պատմելու,—կարծեմ իր հատորներուն թիւը 70-ի կը հասնի, եւ որ նոյն իսկ Թիէրի կարծիքով «Գերմանիայի եւ թերեւս Եւրոպայի ամենամեծ պատմագիրն է»։ Քննիչ պրոֆէսորներ Լամպրէխտի եւ Մարքսի դատաստանովը՝ պ. Նալբանդեանի աշխատանքը գեղեցիկ, եռանդուն եւ աջող է, կը գերազանցէ բոլոր իր նախորդները, ու դրդումներ պիտի տայ՝ աւելի ձեռնհասօրէն եւ արժանաւորապէս Ռանկեան գրականութիւնը գնահատելու։ Եւ աշխատանքը նախ քան դիսէրտացիայի յատուկ տետրի ձեւին մտնելը՝ պրոֆէսորներու առաջարկով ամբողջութեամբ լոյս պիտի տեսնէ պարբերական «Leipziger Studien»-ի մէջ, ուր կը հրատարակվին չորս-հինգ պրոֆէսորների համաձայն հաւանութեամբը ուսանողական գրաւոր աշխատանքներուն ամենէն աջողվածները ու կարեւորները։

Պ. Նալբանդեան բախտաւորութիւն ունի իր պրոֆէսորների համակրանքը ու բարեկամութիւնը վայելելու։ Նոյնպէս ուրախալի է յայտնել, որ պրոֆէսոր Լամպրէխտ իր արդէն հրատարակել ձեռնարկած պատմութեան շարքին մէջ մտցնելու նպատակով՝ իր ընդարձակ իմաստովը «Հայոց պատմութեան» մը պատրաստութեանը մասին խոստում առած է պ. Նալբանդեանէն։

Ա. Շահէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Matin» լրագիրը հաղորդում է, որ Նոր-Զէլանդիայի կառավարութիւնը դիմեց շրջաբերականներով բոլոր երկիրների պօստային վարչութիւններին՝ առաջարկելով 10 սանտիմ արժողութեան համաշխարհային պօստային մարկա մտցնել։ Շատ պետութիւններ իրանց համաձայնութիւնը յայտնեցին։ Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան եւ Աւստրիան պատասխանեցին, որ այդ հարցը ամենից յարմար կը լինէր վճռել համաշխարհային պօստային դաշնակցութեան առաջիկայ կօնգրէսին, որ տեղի կունենայ 1902 թւին Հռօմում։

—Անցեալ չորեքշաբթի Père Lachaise գերեզմանոցում հանդիսաւոր կերպով բացվեց Եժէն Սպիւլլէրի արձանը, որ կառուցված է համազգային հանգանակութեամբ։ Հանրապետութեան նախագահն ուղարկել էր իր ներկայացուցիչներին այդ հանդէսին ներկայ գտնվելու համար. այնտեղ էին Վալդէկ-Ռուսսօ, գեներալ Անդրէ, Բրիսսօն եւ այլ քաղաքական գործիչներ։ Ճառեր արտասանեցին Վալդէկ-Ռուսսօ, Ֆօլլէր, Դէշանէլ, Ռանկ եւ ուրիշները։

—«Frankfurter Zeitung» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է, որ Ռուսաստանը համաձայնութիւն կայացրեց Բաղդադի երկաթուղին կառուցանող ֆրանս-գերմանական սինդիկատի հետ, որի հիման վրա ապահովեց իր մասնակցութիւնը վերոյիշեալ ձեռնարկութեան մէջ։

—1876 թւի սերբ-թիւրքական պատերազմի կամաւորները որոշեցին հանդիսաւոր կերպով տօնել այդ պատերազմի քսանեւհինգամեակը եւ այդ առիթով իրանց շնորհաւորութիւնները մատուցանել Թագաւորին։

—Թիւրքաց բարձրագոյն դատարանը ի բացակայութեան մահվան պատժի դատապարտեց պետական խորհրդի անդամ Իսմայիլ-Քէմալին, որը անցեալ տարի արտասահման փախաւ այն րոպէին, երբ հէնց նոր էր նշանակվել Տրիպոլիսի ընդհանուր-նահանգապետ։ Քէմալի գոյքը պէտք է յարքունիս գրաւվի։

—Ժանտախտը Հօնկօնգում վտանգաւոր չափեր է ընդունում։ 1206 հիւանդացողներից մեռան 1131 մարդ։ Չինացիներից շատերը փախչում են քաղաքից։ Գործերը կանգ են առել։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

7 յունիսի

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ։ Ժանտախտը տարածվում է Եգիպտոսի զանազան նաւահանգիստներում։ Գլխաւոր բոյնը Զագազագն է, ուր յունիսին 48 հիւանդացողներ կային։ Հիւանդութեան դէմ կռւելու համար նշանակված են մեծ միջոցներ։

ՄՕՍԿՎԱ։ Դումայի արտակարգ նիստում, Արքայական Ընտանիքի մէջ ուրախառիթ դէպքը նշանաւոր կացուցանելու համար, Բարձրագոյն մանիֆէստը կարդալուց յետոյ, դուման որոշեց հիմնել Մօսկվայում ձեռագործութեան երկու իգական դպրոց, հարիւր անձանց համար իւրաքանչիւրը, քաղաքային դպրոցների դասընթացքը աւարտող աշակերտուհիների համար եւ հիւանդանոցային 15 հազար րուբլի ապառիկները ներել ամենաաղքատ բնակիչներին։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ։ Յունիսի 6-ին, երեկոյեան, ժամանեց հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը եւ հետեւեալ օրը նաւակով Դնէպրով գնաց Ալէքսանդրովսկ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունիսի 7-ին, առաւօտեան, Բալտեան երկաթուղու վրա՝ Կրասնօե-Սելօի եւ Լիգօվօի մէջ, № 6 մարդատար գնացքը Ռէվէլից՝ ընդհարվեց ապրանքատար գնացքի հետ։ Վիրաւորվածներ շատ կան. սպանվածներ չը կան։

Տամբովից, Վեատկայից, Կազանից եւ Պոլտավայից հեռագիրներ են ստացված Արքայական Ընտանիքի մէջ ուրախառիթ դէպքի առիթով տեղի ունեցած մաղթանքների մասին։

ՎԱՐՇԱՎԱ։ Համալսարանական քննութիւնները վերջացած են։ Համալսարանական կանոնադրութեան վերաքննութեան համար կազմված յանձնաժողովը աւարտեց իր զբաղմունքները։ Օգոստոսի վերջը մշակված նախագիծը կը քննէ համալսարանի խորհուրդը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունիսի 7-ին ժամանեց Մեծ Իշխանուհի Եղիսավէտա Ֆէօդօրօվնա։

8 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բիւլլետէն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնայի առողջական դրութեան մասին յունիսի 7-ից, «Նորին Կայսերական Մեծութիւնը եւ Բարձր Նորածինը այս անցած օրը շատ լաւ անցկացրին. առողջութեան դրութեան մէջ բնականից ոչինչ շեղումներ չեն նկատվում»։

ԽԱՐԿՕՎ։ Տօնավաճառում 40,000 պուդ բուրդ ծախվեց սկսած 7 ր. 50 կոպէկով փոքր քանակութիւններով մինչեւ 9 ր. 60 կ. մեծ քանակութիւններով։ Գնողների տրամադրութիւնը թուլանում է ծախողները կախում ունեն բրդավաճառների փոքր խմբակից. անցեալ տարվայ հետ համեմատած սպասում են, որ գները ընդհանրապէս 10 տոկոսով պակաս կը լինեն։

ՆՈՎՕՉԵՐԿԱՍԿ։ Սաստիկ երաշտը եւ անձրեւների բացակայութիւնը կործանարար կերպով են ազդում ցորենների վրա. մի քանի տեղերում հնձել են անասուններին կերակրելու համար։

ԿՐԱԴՕԿ։ Կրօյցինգէրի զօրաբաժինը անցաւ երկաթուղիական գիծը Բարօդայի մօտ եւ այժմ գնում է դէպի արեւմուտք։

ԿԻԼ։ Կայսրն այցելեց ռուսական «Свѣтлана» կրէյսէրը։

ՀԱՄԲՈՒՐԳ։ Համբուրգ-Ամէրիկա գծի «Աստուրիա» շոգենաւը, որը երթեւեկելու է Արեւելեան Ասիայի եւ Նիւ-Եօրկի միջեւ, խրվեց ծանծաղուտի մէջ Ռաս-Եարդի մօտ. մէջը 12 ֆունտ բարձրութեամբ ջուր է լցվել. դրութիւնը շատ վտանգաւոր է. նրա վրա ճանապարհորդներ չը կան. նաւաստիները ափ են իջեցված

Կ. ՊՈԼԻՍ։ Լուրերին նայելով, Բ. Դուռը, դժգոհ լինելով զանազան կարծիքներից Ալբանիայի մասին, որոնք լսվում էին իտալական պարլամէնտում արտաքին գործերի բիւդժէտը քննելու ժամանակ, այստեղի իտալական դեսպանութեան միջոցով դիմեց Հռօմ բողոքով, որի մէջ մատնացոյց է անում, որ այդպիսի դատողութիւնները բարեկամ պետութեան երկրի մասերի մասին պէտք է խուսափվեն մի ուրիշ բարեկամ պետութեան պարլամէնտում։

Շատ չափազանցրած են Նօվօ-Բազարի սանջակում տեղի ունեցած անկարգութիւնների լուրերը. գայմագամից դժգոհ ազգաբնակութիւնը ցոյց արեց նրան պաշտօնանկ անելու համար. ազգաբնակութեան այդ ցանկութիւնը կատարելուց յետոյ, ինչպէս կտրական կերպով հաստատում են Բ. Դրան շրջաններում, հանգստութիւնը վերականգնվեց։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Դիլլօն հարցնում է—համաձայնվե՞լ են արդեօք պետութիւնները իրանց մէջ այն հարցի առիթով, թէ վարձատրութեան ինչ գումար պիտի տայ Չինաստանը, ինչ միջոցով պիտի վճարվի նա եւ ինչ միջոցներով պիտի ապահովվի այդ գումարի մաս-մաս վճարումը։ Կրանբօրն պատասխանում է, թէ հաւաքական այն յիշատակագրի մէջ, որով դեսպանները դիմեցին չինական լիազօրներին, վարձատրութեան գումարը որոշված է 450 միլիօն, իսկ միւս հարցերի վերաբերմամբ խորհրդակցութիւնը շարունակվում է։

ՊԱՐԻԶ։ Սենատը երեկոյեան նիստում վերադառնում է ընկերակցութիւնների օրէնքի քննադատութեանը։ Մի քանի ճառախօսներ պատճառաբանում են 13-րդ յօդուածի վերաբերութեամբ իրանց առաջարկած լրացումների հիմունքները։ Բոլոր այդ առաջարկութիւնները մերժված են։ Մէգիէր առաջարկում է, որ առաջիկայ օրինագծով ազատութիւն տրվի այն բոլոր միաբանութիւններին, որոնք իրանց նուիրում են բարեգործութեան եւ որոնք արտասահմանում տարածում են ֆրանսիական ազդեցութիւնը եւ ֆրանսիական անուան փառքը։ Մէգիէր դրա հետ մատնացոյց է անում թէ ինչ զոհեր են բերում Գերմանիան եւ Իտալիան իրանց միսիօնարական հիմնարկութիւնների համար, եւ Վալդէկ-Ռուսօն իր պատասխանի մէջ խոստովանում է, որ միսիօնէրական հիմնարկութիւնները ծառայութիւններ են մատուցանում Ֆրանսիայի ազդեցութեանը, խոստովանում է նաեւ բարեգործական հիմնարկութիւնների օգուտը, բայց, այնուամենայնիւ, գտնում է, որ անհրաժեշտ է հսկել այդ կրօնական միաբանութիւնների վրա։ Մէգիէրի առաջարկութիւնը մերժվեց։

ՏԵԱՆՑԻՆ։ Չինական զօրքերը, դաշնակից զօրքերի պետերի թոյլտուութեամբ, գրաւեցին մի քանի փոքրիկ կէտեր Եանցունի մօտ, որտեղից օտարազգի զօրքերը հեռացել էին։ Գեներալ Կէմպբէլ յայտնում է, թէ նորերս օտարազգի զինուորների եւ ոստիկանների միջեւ տեղի ունեցած կռիւները, հաւանականօրէն, այլ եւս չեն կրկնվի շնորհիւ այն հանգամանքի, որ այդ կռիւներում մեղաւոր ճանաչվածները խիստ պատժվեցին. գեներալ Վուարօն խոստացաւ այդ նկատմամբ իր կատարեալ աջակցութիւնը եւ վճռական կերպով յայտնեց, թէ, որքան հարցը վերաբերում է ֆրանսիական զօրքերին, կարգը անխախտ կը մնայ։

ՀՌՕՄ։ Սենատ։ Արտաքին գործերի բիւջէտին վերաբերեալ վիճաբանութիւնները։ Արտաքին գործերի մինիստրը նոյնպիսի բացատրութիւններ տուեց, ինչպէս եւ պատգամաւորների ժողովում։ Նա մատնացոյց արեց այն հանգամանքը, որ իտալական շահերը Միջերկրական ծովում եւ Բալկանեան թերակղզում բաւականաչափ ապահովված են։ «Իտալիան,—

չարունակեց նա,—կարող է ասել ինքն իրան, որ արդարեւ ինքը աջակցել է խաղաղութեան պահպանման։ Եւրոպայում կազմված՝ պետութիւնների համախմբումը այսուհետեւ դառնալու է խաղաղութեան գործօն. զանազան պետութիւնների յարաբերութիւնները աւելի քիչ են լարված լինելու այդ համախմբման շնորհիւ։ Չինաստանի դէպքերը ապացուցեցին, որ արդէն երկար ճանապարհ է արված դէպի հաստատապէս խաղաղ դրութեան նպատակէտը»։ (Բուռն հաւանութիւններ)։ Դրանից յետոյ արտաքին գործերի մինիստրութեան բիւջէտը որոշվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Россія»-ի ասելով, միջնակարգ դպրոցների բարեփոխիչ յանձնաժողովի յունիսի 5-ի նիստում քննվեցին դասացուցակները գիմնազիաների եւ ռէալական դպրոցների համար, ուր առաջիկայ ուսումնական տարվայ սկզբից ենթադրվում է սկսել պարապմունքներ նոր ծրագիրներով։ Եկող 1901—1902 ուսումնական տարին ենթադրվում է լատիներէնը դուրս գցել առաջին եւ երկրորդ, իսկ յունարէնը երրորդ եւ չորրորդ դասարաններից։ Միւս դասարաններում սովորողները կը շարունակեն իրանց պարապմունքները առաջվան ծրագիրներով։ Ներկայ թիւ օգոստոսամսից գիմնազիաների երկու ստորին դասարաններում սկսելու են աւանդել աշխարհագրութիւնը. ռէալական դպրոցների առաջին եւ երկրորդ դասարաններում սկսելու են աւանդել պատմութիւնը եւ ուժեղացնելու են մաթեմատիկայի դասատւութիւնը առաջինում եւ աշխարհագրութեան ու բնական գիտութիւնների դասատւութիւնը երկրորդում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Новое Время» հաղորդում է, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի նախագահութեամբ կազմված յանձնաժողովը վերջացրեց իր պարապմունքները։ Վերջացել է միջնակարգ դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու հարցի քննութիւնը։ Յանձնաժողովի աշխատութիւնների արդիւնքները կը տպվեն բազմաթիւ օրինակներով եւ կուղարկվեն, քննութեան համար, հոգաբարձական խորհուրդներին եւ նահանգապետներին, որպէս զի նրանք քննեն այդ հարցերը առանձին խորհրդակցութիւնների մէջ, որոնք կազմված կը լինեն ազնուականութեան, զեմստվօյի ու քաղաքների ներկայացուցիչներից եւ նմանապէս այնպիսի անձերից, որոնց կարծիքը կառավարութիւնը օգտակար կը գտնի լսել։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Ջիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Բարանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոստոմբէկով—6—7 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ. ծաղիկ է կարում նոյնպէս և կիրակի, առաւօտեան ժամի 9—10.

Բ. Ա. Նաւասարդեան—$7^{1}/_{2}$—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Լոյս տեսան
Բժ. Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
„ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԻ" № 2
1) „ՎԱՏ ՑԱՒ"
8 նկարով Գինն է 6 կոպ.
2) «ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ» Գինն է 75 կ.

Ծախվում է Թիֆլիսի ու գաւառների գրավաճառանոցներում եւ հեղինակի մօտ։ Գաւառացիները դիմելու են Թաւրիզ դոկտոր Փաշայեանին։

Մինչեւ սեպտեմբեր դիմել՝ Левону Меликъ-Адамянъ, редакція «Мурчъ».

Գ. Մելիք-Ադամեանից «Վատ ցաւ» գրքոյկը վրադիր վճարով կարող են ստանալ միայն նրանք, որոնք կը պահանջեն ոչ պակաս քան 50 օրինակ։ 12—15

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

համար հարկաւոր են երկու ուսուցիչ, մէկը, որ աւանդելու է դպրոցական դասարաններում բնական պատմութեան 8, բնագիտութեան 7 դաս, իսկ պատրաստականներում թուաբանութեան 11 դաս 1320 ր. ռոճկով, լինելու է համալսարանաւարտ բնագէտ կամ մաթեմատիկոս. միւսը, որ աւանդելու է պատրաստականներում ռուսաց լեզուի 18 դաս, պէտք է լինի ուսուցչական ճեմարանը (учительскій институтъ) աւարտած կամ պատշաճաւոր վկայական ունեցող իրաւատէր ուսուցիչ։ Ցանկացողները թող դիմեն въ Нахичевань на-Дону, Ректору Семинаріи, Г. Чарихьяну.

Տեսուչ դպրանոցի պետական խորհրդական
Գ. Չարխեան
(Հ. Հ.) 2—6

ՀՐԱՒԷՐ

Այսու կրկին առաջին անգամ յարգոյաբար հրաւիրվում են Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցու բարեպաշտ ծխականները յիշեալ եկեղեցին, ամսիս 10-ին, առաջիկայ կիրակի օր, 12 ժամին, զննելու յիշեալ եկեղեցու 1898 եւ 99 թւականների հաշւեմատեանները։

Գործակալ ա. մ. եկ. հ. Թիֆլիսի՝
Զաքարիա քահ. Զարդեղեանց

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
(Зубной врачъ)
Օր. Շ. ՏԷՐ-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆ
Ընդունում է հիւանդներին ամենայն օր՝
Առաւօտեան 9—3 ժ.
Երեկոյեան 5—7 ժ.
Հասցէն՝ Սուրբ-Նշան եկեղեցու գաւթում։
2—8

19-го іюня, въ 10 часовъ утра, въ г. Ростовѣ на Дону, Николаевск. пер., д. Шіяновскихъ, съ публичныхъ торговъ будутъ продаваться писчебумажные товары и конторскія принадлежности несостоятельныхъ должниковъ К. и А. Иващенко. Товаровъ на 17,000 рублей. 3—3

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ.

եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի 20 յունիսի (3 յուլիսի) շոգենաւ՝ ՄԻՆԳՐԵԼԻ, նաւապետ ԲՈՒԼ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4 ին կէսօրից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխօվի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկեանի, № 27։ ՆՈՎՈՐՈՍՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Հ. Հ.) 13—20

ԲԺԻՇԿ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Ամսիս 16-ին մեկնեց կովկասեան հանքային ջրերը, ուրտեղ, նախկին տարիների պէս, կընդունէ հիւանդներին։

Հասցէն՝ Пятигорскъ, Верхній бульваръ, д. Карповой. 13—15

Լոյս տեսաւ
Ալեքսանդրապօլցի
ԱՇԸՂ ՋԻՎԱՆՈՒ ԵՐԳԵՐԸ
Ծախվում են զանազան քաղաքների գրավաճառանոցներում։ 3—3

Կօնֆէկտի եւ շօկօլադի գործարան
„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ"
ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են շաքարեղէնների ամեն տեսակ արտադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ։

Պատրաստում ենք՝ կարամէլ մրգեղէնից (фруктовая карамель), կարամէլ լցված (съ начинкою), մարմելադ (пастила), զէֆիր (зефиръ), դրաժէ (драже), քիրվա-շաքար (պող-շաքար, леденецъ).

Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի վարպետի հսկողութեան տակ։

Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշտութեամբ։

Պրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի։

Պատուէրների համար դիմել՝ Тифлисъ, Нахаловка, Павловская улица, собственный домъ, № 12.

Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազիններում—Գ. Բայեանդուրեանի, Գ. Ս. Տէր-Սիմօնեանի, Զ. Ի. Սուլխանեանի, Զ. Պ. Պօպօվի, Եղբ. Ս. Ի. Մ. Աբրահամօֆների, Հաջի-Ռախմանովի պարսկական մագազինում, Պետրօի իտալական մագազինում եւ այլն։ Տելեֆօն № 362։
34—100

Р. К. и К°.

Фабрично-Торговое Товарищество
Р. Кёлеръ и К°. въ Москвѣ, Ильинка, Средніе торг. ряды.
Отдѣленія: въ С.Петербургѣ, Саратовѣ, Владивостокѣ и Нижегородской ярмаркѣ.

Прованское масло,
извѣстное кёлерское,
приготовленное въ Ниццѣ по особому указанію.
Масло это прессуется только изъ свѣже-собранныхъ,
прямо съ дерева,
вполнѣ спѣлыхъ и отборныхъ оливокъ.

Кёлерская
уксусная эссенція.
Благодаря извѣстной доброкачественности кёлерской уксусной эссенціи и несомнѣннымъ преимуществамъ ея предъ всѣми другими, сбытъ ея, постепенно прогрессируя, достигъ въ истекшемъ году цифры
болѣе чѣмъ
$1^{1}/_{2}$ миллиона флаконовъ.
Дешевыя цѣны однако предлагаются и многими подражателями, но необходимо знать, что онѣ имѣютъ своимъ основаніемъ не громадный сбытъ и естественную при этомъ возможность удешевленія товара, а лишь вынужденное стремленіемъ къ конкурренціи разбавленіе водой и меньшую раффинировку (утонченіе вкуса) эссенціи.

Клюквенный
экстрактъ
фабрики т-ва
Р. Кёлеръ и К°
даетъ вполнѣ прозрачный прелестнаго цвѣта и вкуса напитокъ.

=Перецъ=
черный и бѣлый
молотый, въ жестянкахъ съ просѣвающей крышкой, отъ $^{1}/_{32}$ до 1 ф. а также въ изящныхъ граненыхъ флакон. для стола.
Подмѣси къ молотому перцу—такое обычное явленіе и настолько перешли границы, что готовый молотый перецъ часто продается гораздо дешевле немолотаго цѣльнаго. Ярлыкъ же Т-ва Р. Кёлеръ и К°, какъ извѣстно всѣмъ, служитъ вѣрнымъ ручательствомъ въ неподдѣльности товара.

Столовая соль,
химически чистая
высшей раффинировки,
фабрики т-ва Р. Кёлеръ и К°.
Эта соль не гигроскопична и поэтому въ солонкѣ не волгнетъ и не образуетъ комковъ.

Кёлерская
душистая
столовая
горчица
въ порошкѣ, вполнѣ готовая для мгновеннаго приготовленія изъ нея горчицы; превосходитъ всѣ подобныя произведенія по тонкости вкуса, аромату и дешевизнѣ.
NB. Рекомендуется также и обыкновенная крупная сухая горчица для стола.

Высшая награда Grand Prix на Парижской выставкѣ 1900 г.

Въ продажѣ вездѣ у всѣхъ болѣе извѣстныхъ торговцевъ.

(Մ. 19, յուն. 9, 20, 30)

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Іюня 1901 г.
Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 72.